հանան և կապառալուն, իսկ պետական հարկ վճարում են.—

Մարդագլուխ 2 դրան. Կովին 6 դրան.
Ոչխարին 1 » Այծին 10 չափ.

Հողը հերկում են արօրով։ Ցանում են ցորեն, գարի, հաճար, կտաւահատ, արևածաղիկ, եօնջա, գետնախնձոր (քիչ), վարունգ, ոսպ, թրև և այլն։

Գիւղն ունի երեք եկեղեցի՝ Ս. Ամենափրկչեան (հիմնուած է 1608 թուին), որ մի բաւական գեղեցիկ շէնք է, Ս. Թադէոս և Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Այստեղ կրթական գործն այնքան էլ մխիթարական չէ. գիւղի արևմտեան կողմը, Փոքրիկ չայի կողքին փուած է «Յովնանեան» ազգային դպրոցը, որ հիմնուել է 1904 թուին, օժանդակութեամբ տ. Վառվառէ Քանանեանի և Եզնիկ ծ, վ. Երկարակեցեանի ջանքերով. դա մի յարկանի, երեք կողմը պարտէզով շրջապատուած գեղեցիկ մի շինութիւն է, որի երկարութիւնն է 42 գազ և լայնութիւնը 18, իսկ պարիսպը քառակուսի է. իւրաքանչիւր կողմը 60 գազ։ Բաղկացած է 11 օդասուն սենեակներից—մի գրադարանով, ուր կան մօտ 140 կտոր հայերէն գրքեր և պարբերական հրատարակութիւններ։ Արևմտեան պարսպի ուղղութեամբ, դրսի դրան աջ թևի վրայ բարձրանում է նաև մի երկյարկանի շէնք դպրոցի պէտքերի համար։

Դպրոցի տիպն անորոշ է, որտեղ յաճախում են ձմեռը 200-ից աւելի երկսեռ աշակերտներ, իսկ գարնան վերջերը և ամառն աշակերտների թիւը հետզհետէ քչանում է երկրագործական աշխատանքների պատճառով։ Այս տարի դպրոցը բաղկացած էր երկու բաժանմունքից և ունէր 1 ուսուցիչ, 1 ուսուցչուհի, որոնք աւանդում էին հայերէն, հայոց պատմութիւն, թուաբանութիւն, պարսկերէն, գրութիւն, կրօն, արտագրութիւն և ժամագիրք։ Սակայն դպրոցում շատ թերութիւններ կան. նստարանները անյարմար են աշակերտներին. դասերի տևողութիւնը կատարւում է առանց ժամացոյցի, երբեմն շատ երկար է, 6—7—8 տարեկաններին